



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«12» 08 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000064

Ձեռնարկողը՝

«ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոյուզնա» ՍՊԸ
Ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3

Գործունեությունը՝

«Ծովազարդ գյուղում Գագիկ Բարիկյանին պատկանող
տարածքի 0.22կվ էլեկտրամատակարարում»
աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա
ազդեցության գահատրման հաշվեպլություն
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000064

«12» 08 2019թ.

«Գեղարքունիքի մարզի Ծովազարդ գյուղում Գագիկ Բատիկյանին պատկանող տարածքի 0.22կվ էլեկտրամատակարարում» աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝

<<ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս>> ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր

Գործունեության կատեգորիա՝

<<Բ>>

Տեղադրման վայրը՝

Գեղարքունիքի մարզ

Գեղարքունիքի մարզի Ծովազարդ գյուղի բնակիչ՝ Գագիկ Բատիկյանին պատկանող շինության էլեկտրամատակարարումը ապահովելու նպատակով, Պատվիրատուն համապատասխան հայտ է ներկայացրել "Հայաստանի էլեկտրական ցանցեր" ՓԲԸ, ինչի համաձայն "Հայաստանի էլեկտրական ցանցեր" ՓԲԸ-ի "Գեղամա" մասնաճյուղի կողմից 27.04.2018թ.-ին կազմվել է № 34783111 ծածկագրով էլեկտրամատակարարման տեխնիկական առաջադրանք, որի հիման վրա "Վոլիոս" մասնագիտացված նախագծային ընկերությունը (Լիցենզիա №16534) մշակել է "ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ծովազարդ Գագիկ Բատիկյանին պատկանող տարածքի 0.22 կվ էլեկտրամատակարարում" աշխատանքային նախագիծը:

Էլեկտրամատակարարման գծի կառուցման աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմելու է 10 աշխատանքային օր:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզում, փոքր Սևանի հարավ-արևմտյան ափին, Ծովազարդ համայնքում, տեղակայված է "Սևան" ազգային պարկի ռեկրեացիոն և տնտեսական գոտիներում:

Օդային գծի կառուցման նպատակն է ապահովել Գագիկ Բատիկյանին պատկանող տարածքի/հողամասի էլեկտրամատակարարումը: Գ. Բատիկյանին պատկանող տարածքը՝ ըստ 11.04.2005թ.-ի թիվ 371 վարձակալության պայմանագրի, կազմում է 0.1 հա, գտնվում է



Սևան-Գավառ ավտոճանապարհի աջակողմյան հատվածում և հարևանում է Սևանա լճին: Տարածքը ոչ անտառածածկ է և նախատեսված է հանգստի գոտի կառուցելու համար:

Նախագծի հիմքը "Հայաստանի էլեկտրական ցանցեր" ՓԲԸ-ի "Գեղամա" մասնաճյուղի կողմից տրված № 34783111 առ 27.04.2018թ. էլեկտրական ցանցին միացման տեխնիկական պայմանն է, որի համաձայն, բաժանորդին պատկանող տարածքի էլեկտրամատակարարման համար նախատեսվում է իրականացնել հետևյալը աշխատանքները.

- տեղակայել 16 կՎԱ հզորության 10/0.22 կՎ ենթակայան,
- սնուցումը իրականացնել Լճափ 35/10 կՎ ենթակայանից դուրս եկող Լճափ 10 կՎ օդային գծի թիվ 2 հենարանից ճյուղավորումով՝ կառուցելով 10 կՎ օդային գիծ,
- հանգստի գոտու էլեկտրամատակարարումն իրականացնել նորակառույց ենթակայանից՝ կառուցելով 0.22 կՎ օդային գիծ:

Նախատեսվող գործունեության տարածքի հատակագիծը համաձայնեցված է Ծովազարդ համայնքի ղեկավարի, "ՀԷՑ" ՓԲԸ "Գեղամա" մասնաճյուղի գլխավոր ճարտարագետի, "Գավառ" էլ. ցանցի գլխավոր ճարտարագետի և դիմումատուի/պատվիրատուի՝ Գագիկ Բատիկյանի հետ: Աշխատանքային նախագիծը նախնական փուլում 06.11.2018թ.-ի թիվ 25-444-Ն գրությամբ համաձայնեցվել է նաև "Սևան" ազգային պարկ ՊՈԱԿ-ի հետ:

"Սևան" ազգային պարկի սահմանագիծը անցնում է Սևան-Գավառ (Մ10 "Սևան-Մարտունի-Գետափ") ավտոճանապարհով: Կառուցման ենթակա օդային գծի երկարությունը կազմում է 299մ, որից 171մ՝ 10 կՎ լարման ՕԳ-ն է, իսկ մնացած 128մ-ը՝ 0.22 կՎ: Օդային գծի անցկացման համար տեղադրվելու են 11 հենարաններ, որոնցից 6-ը՝ Ծովազարդ համայնքի վարչական տարածքում (գտնվում են Սևան-Գավառ ավտոճանապարհից դեպի ձախ և ներառված չեն "Սևան" ԱՊ տարածքում), իսկ 5-ը՝ Ծովազարդ համայնքի վարչական սահմաններում՝ "Սևան" ազգային պարկի տարածքում (գտնվում են Սևան-Գավառ ավտոճանապարհից դեպի աջ): "Սևան" ազգային պարկի տարածքով անցնող օդային գծի երկարությունը կազմելու է 128մ (5 հենարաններ), ընդ որում այդ հատվածի 5 հենարաններից 4-ը՝ գտնվելու է Գ. Բատիկյանին պատկանող տարածքում: ՕԳ-ի ուղեգիծը վերագետնյա է, հենարանների տեղադրման և օդային գծի կառուցման ընթացքում ծառահատման կարիք չի առաջանալու:

Հողային աշխատանքները կատարվելու են ձեռքով: Հողային աշխատանքների իրականացման ժամանակ՝ 11 հենարանների տեղադրման արդյունքում առաջանալու է 29.72մ³ ծավալով հող, որից 22.79մ³ օգտագործվելու է փոսորակների ետլցման՝ հենարանների հիմքերի ամրացման, իսկ 6.93մ³ հողը փորված հատվածների հարթեցման համար: Հարթեցման համար օգտագործվող 6.93մ³ հողից 0.836մ³ ծավալով հողը բուսահող է, որը օգտագործվելու է տեղում, փորված հատվածների հարթեցված մակերեսի բարեկարգման համար:

Համաձայն տեխնիկական պայմանի, նոր տեղադրվող ՄՏԵ-ի սնումը պետք է իրականացվի "Լճափ" 35/10 կՎ ենթակայանից սնվող "Լճափ" 10 կՎ ՕԳ-ի թիվ 2 հենարանից, ճյուղավորումով, կառուցելով 10կՎ ՕԳ: Միաժառ տրանսֆորմատորային ենթակայանը տեղադրվելու է №7 նախատեսվող հենարանի վրա: Միաժառ տրանսֆորմատորային ենթակայանի բոլոր սարքավորումները մոնտաժվելու են նախատեսվող երկաթբետոնե հենարանի վրա: Մոնտաժվող սարքավորումներն են՝ եռաբևեռ РЛНД.1-10/200У1 տիպի բաժանիչ՝ ПРН3-10У1 տիպի շարժարերով, գերլարման



սահմանափակիչներ ՕՊՈ-10 և ՔԲՈ-0.5Մ1 տիպի, ապահովիչ ՈՒ1-10-8/3՝ 2 տիպի, միաֆազ տրանսֆորմատոր ՕՄՈ 10/0.22կՎ տիպի և ցածր լարման բաշխիչ վահան:

Նախագծվող 10կՎ ՕԳ-ի երկարությունը ըստ նախագծի 171մ է, որի կառուցման համար, կլիմայական պայմաններից ելնելով, ընտրվել է AC50/3.2մմ² տեսակի հաղորդալար: Հենարանների տեղաբաշխումը կատարված է հատակագծի վրա: Փոխհատվող ՕԳ-ի մոտակա հաղորդալարերի (կամ հաղորդալարերի և մետաղաճուպանների) միջև նվազագույն հեռավորությունը ընդունված է 2մ-ից ոչ պակաս (օդի 15°C ջերմաստիճանի դեպքում, առանց քամու):

Նախագծվող 10կՎ ՕԳ-ի օպերատիվ անջատումների համար №1 երկաթբետոնե հենարանի վրա նախատեսվում է տեղադրել ՔՄԻՃ1-10/400Մ1 տիպի գծային բաժանիչ: ՕԳ հաղորդալարերի նվազագույն հեռավորությունը հողի մակերևույթից ապահովված է ոչ պակաս 7մ:

Նոր տեղադրվող ՄՏԵ-ից բաժանորդի տարածքի 0.22կՎ էլեկտրամատակարարումն իրականացվելու է ՇՈՒՄ-2 2x25մմ² կտրվածքի հաղորդալարով: 0.22կՎ ՕԳՄ-ի ընդհանուր երկարությունը կազմում է 128մ, որից 8մ հենարանի երկայնքով, 120մ օդային: 0.22 կՎ ՕԳՄ-ն անցնելու է №1÷4 նախատեսվող երկաթբետոնե հենարաններով և միանալու սպառողի կողմից տեղադրվող մետաղական կանգնակին: Էլեկտրաէներգիայի հաշվարկի համար, նախատեսվում է №7 երկաթբետոնե հենարանի վրա տեղադրել միաֆազ երկսակագնային էլեկտրոնային հաշվիչ և ավտոմատ անջատիչ՝ նոր տեղադրվող հաշվիչի պլաստմասե արկղում:

Հենարանների տեղաբաշխումը կատարված է ելնելով ընտրված հենարանների հաշվարկային հենամեջերից: ՕԳՄ հաղորդալարերից մինչև բնակեցված և չբնակեցված տեղանքի գետնի մակերևույթը և փողոցների երթևեկելի մասերը հեռավորությունն ուղղաձիգով նախատեսված է ոչ պակաս 5մ:

Նախատեսվող գործունեության տարածքում հազվագյուտ, Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ չկան:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մթնոլորտի հիմնական աղտոտիչներն են՝ շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում առաջացող գազանման արտանետումները (վառելիքի այրման արդյունքում), հողային/փորման աշխատանքների և գրունտի տեղափոխման ընթացքում, ինչպես նաև շահագործվող տեխնիկայի շարժից առաջացող փոշին:

Ըստ նախագծային փաստաթղթերի նախատեսված են շրջակա միջավայրի պահպանությանն, մասնավորապես՝ մթնոլորտային օդի, թափոնների կառավարմանը, հողի բերրի շերտի պահպանությանն ուղղված և այլ միջոցառումներ, ինչպես նաև սոցիալական ազդեցությունների նվազեցմանն ուղղված միջոցառումներ:

Գործունեության իրականացման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ:

Եզրահանգում Ներկայացված ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են մթնոլորտային օդի, հողային ռեսուրսների, ջրային ռեսուրսների ազդեցության նվազեցմանն ուղղված բավարար միջոցառումներ:



Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը զգալի չէ և կրում է ժամանակավոր բնույթ:

Այսպիսով իրականացվող աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են Շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում նախագիծը վերադարձվել է լրամշակման և լրակազմման, հաշվի են առնվել ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:

Փորձաքննական պահանջ

Գործունեության իրականացման արդյունքում առաջացած թափոնների կառավարումն ու շինարարության ավարտից հետո առաջացած շինադրի (կենցաղային ադրի) հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Էյ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ կողմից ներկայացված «Գեղարքունիքի մարզ, Ծովազարդ գյուղում Գագիկ Բատիկյանին պատկանող տարածքի 0.22կվ էլեկտրամատակարարում» աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Գլխ, մասնագետ՝



Ձ. Զուռնայան